



«Ժ ԽՈՐԱՆԱՅ» ԵՐԿՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Ավետարանների 10 խորանների վերաբերյալ հայտնի է հայերեն մի քանի մեկնություն, ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ՝ և ոչ մեկը: Ինքնին ուշագրավ, բայց և դժվար բացատրելի երևույթ. համաքրիստոնեական պատմամշակութային, խորհրդանշական և գեղագիտական այնքան լուրջ շահագրգռություն ներկայացնող սույն թեման հագիվ թե միայն հայերեն անդրադարձ ունենար: Հայերեն մեկնությունների բովանդակությունն էլ, որ վերաբերում է երբեմն այնպիսի խորհրդանշանների (կոկորդիլոս, կապիկ, արմավենի...), որոնք բնորոշ ու հարազատ չեն Հայաստանի կենդանական և բուսական աշխարհին, մեզ մղում է ենթադրելու, որ մայր բնագիրը պիտի արտահայտատանջան ծագում ունենա: Նկարագրողված խորանները ևս, որոնք իրագործվում են ըստ հիշյալ մեկնությունների, մեզ մույնն են հիշում: Բոլոր դեպքերում, կարծում ենք, սպասելի էր, որ ավետարանների 10 խորանների վերաբերյալ մեկնություն լիներ ոչ միայն հայ մատենագրության մեջ:

Դեռևս տարիներ առաջ մեր ուշադրությունը գրավել էր այս նույն թեմային նվիրված մի բնագիր՝ վերագրված Եվսեբիոս Կեսարացուն: Հշտապեցինք անդրադառնալ նրան, սպասելով նոր փաստերի ու ճշտումների: Այժմ, երբ մանավանդ մեր օրերում, այնքան տեղին է ընդգծվում խորանների մեկնությունների պատմագեղագիտական կարևորությունը, որոշեցինք կատարել այս հավիրճ անդրադարձը:

Խնդրո առարկա բնագիրը առանձին, իբրև անկախ միավոր, պահպանվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 772 ձեռագրում¹: Խորագրի և վերջաբանի կրկնակի վկայությամբ այն պատկանում է

Եվսեբիոս Կեսարացու գրչին, «Յաղագս ցանկի Աւետարանին և Ժ խորանացն մեկնութիւն, զոր արարեալ է Եւսեբէոս ի խնդրոյ Կարայիանոսի եպիսկոպոսի հարցումն թէ՛ վասն է՛ր է Ժ կանոն սահմանեալ»։ Վերջում՝ «դարձեալ տեսութիւն Ժ խորանաց ցանկոյն և գլխոցն, իսկ Ժ գլխաւորագոյն ցանկն սրբոյն Եւսեբեայ ասացաւ ի վերոյ...»²:

Ներկա դրությամբ որևէ լուրջ հիմք ու պատճառ չկա առարկելու ձեռագրական սույն հստակ վերագրմանը:

Այս միևնույն բնագիրը տեսնում ենք մեկ այլ բնագրական կապակցության մեջ: Գրիգոր Տաթևացին չորս ավետարաններին նվիրված մի ծավալուն ներածություն ունի, որի մեջ առկա է խնդրո առարկա սույն բնագիրը՝ շատ չնչին միջամտություններով: Խորագիրը հավաստում է, որ խորանների այս մեկնությունը Գրիգոր Տաթևացին պարզապէս «հավաքել» է և դա միանգամայն ճիշտ է «Գրիգորի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի հաւաքեալ քաղուածոյ մեկնութեան Խորանաց սուրբ աւետարանացն»³:

Տեսանք, որ այն առկա է նաև Գրիգոր Տաթևացու սույն ներածությունից անջատ, իբրև ուրույն, անկախ բնագրական միավոր՝ հստակ վերագրված միայն Եվսեբիոսին: Սա ևս հավաստում է, որ Գրիգոր Տաթևացին այն, իրոք, «հավաքել» է այլուստ և ոչ թե «արարել», ինչպէս պիտի ասվեր, եթե ինքը լիներ հեղինակը: Որ դա այդպէս է, շատ պարզ երևում է նաև Գրիգոր Տաթևացու ներածության կառուցվածքից. մեզ հետաքրքրող «Ժ Խորանաց» բնագիրը այնտեղ զետեղված է մույնությամբ, պահպանելով անգամ իր սեփական վերնագիրը, որ մույնն է վերոբերյալի հետ.

² Նույն տեղում, թթ. 138ա, 147բ:

³ Մատենադարան, ձեռ. № 5591, ք. 7բ:

¹ Ձեռ. № 772, թթ. 138ա—147բ:

«Ի ցանց Անետարանին տեսությունն վասն Ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»⁴: Այս խորագիրը Գրիգոր Տաթևացին, բնական է, իր ձեռքով է ընդօրինակել այսպես, իր ներածությունը «քաղվածաբար հավաքելիս»: Այսինքն՝ նա իմացել ու հավատացել է, որ սույն բնագիրը «արարեալ է մեծին Եւսեբեայ»: Գրիգոր Տաթևացու նման գիտնական-մատենագետի այս կարգի վկայությունը տվյալ դեպքում ևս լուրջ երաշխիք է:

Նկատենք նաև, որ այն երբեմն դրվում է Եվսեբիոսի Կարպիանոսին գրված նամակին առընթեր՝ արտաքո խորանների: Այս ևս նվազ կարևոր հաստատում չէ, քանի որ «Ժ խորանաց» մեկնության բնագրի խորագրում ևս որոշակի ապում է, որ այն գրվել է Կարպիանոսի խնդրանքին կամ հարցման ի պատասխան՝ մույն Եվսեբիոսի կողմից⁵:

Թեև բացառված չէ, սակայն, շատ էլ հավանական չէ, որ այն գրված լինի անուր մեզ անհայտ մի այլ հայ հեղինակի կողմից և վերագրված Եվսեբիոսին:

Ըստ այս ամենի, միանգամայն հնարավոր ենք համարում, որ այն, իրոք Եվսեբիոս Կեսարացու գրչին է պատկանում՝ հորինված Կարպիանոսին գրած իր հայտնի նամակին իբրև օրգանական և տրամաբանական շարունակություն, թերևս և՛ միևնույն աղբյուր:

Այսպիսով, կարծում ենք, պարզվում է, որ սույն բնագրի հեղինակը Գրիգոր Տաթևացին չէ, ինչպես ընդունվել էր առաջաօր, այլ՝ Եվսեբիոս Կեսարացին: Հաստատվում է, որ նման մեկնություն եղել է նաև ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ (թերևս ուրիշներ էլ ի հայտ գան): Հայ թարգմանական գրականությունը ավելանում է մի արժեքավոր միավորով: Հավանաբար հայերեն թարգմանված (ապոքրեֆիկ) այս բնագիրն է աղբյուր ու հիմք ծառայել հայերեն համապատասխան մեկնություններին:

* *

«Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետին» է վերագրվում Ավետարանի 10 խորաններին նվիրված մի մեկնություն: Հայերեն համապատասխան մեկնություններից թերևս ամենակարևորը սույն երկն է: Այն հատկապես նշանակալից է հայ մանրա-

նկարչության տեսության ու պատմության ուսումնասիրման համար:

Մեր նպատակից դուրս է նրա գեղագիտական-տեսական ընկալությունը: Մենք սույն բնագրին կանդրադառնանք միայն բանասիրական նկատառումներով:

Այն ընդօրինակվել ու հետագայում հրատարակվել է Ներսես Շնորհալու «Մատթեոսի Անետարանի մեկնութեան» հետ համատեղ և վերագրվել նրան: Սույն վերագրումը ուժի մեջ է առաջաօր:

Մեր հետազոտությունների ընթացքում մեզ համար պարզվեց հետևյալը. հիշյալ բնագիրը, ինչպես արդեն նշեցինք, ձեռագրերում հանդիպում է «Վարդան վարդապետի» անունով, բայց նաև՝ առանց հեղինակի անվան հիշատակության: Այս խմբի ձեռագրերը ավելի հին են, քան նրանք, որոնք թույլ են տալիս այն վերագրելու Ներսես Շնորհալուն: Վերջինները, ինչքան մեզ հայտնի դարձավ, ԺԴ դարից այն կողմ չեն անցնում, իսկ առաջիններից, օրինակ, Մատենադարանի № 8106 ձեռագիրը 1255 թվականի ընդօրինակություն է: Այստեղ հիշյալ մեկնությունը առանց հեղինակի անվան հիշատակության է: Մատենադարանի № 4139 ձեռագրում, որտեղ առկա է նաև Ներսես Շնորհալու «Մատթեոսի Անետարանի մեկնութիւն»-ը, այն դարձյալ առանց հեղինակի անվան հիշատակության է և անցառ վերջինից: Այս ձեռագիրը ևս վաղ շրջանի՝ 1267 թվականին ընդօրինակված մի «Տօնապատճառ» է, այն «Տօնապատճառ»-ներից, որոնց վերակազմողը, ինչպես ցույց ենք տվել ժամանակին⁶, ստուգապես Վարդան Արևելցին է, առանց բացառելու, որ «Տօնապատճառ»-ների կազմության աշխատանքներին նախապես կարող էր մասնակցած լինել նաև Վարդան Հաղբատացին: Սակայն, այս ձեռագրում ևս այն որոշակի չի վերագրվում որևէ մեկին, ո՛չ Ներսես Շնորհալուն, ո՛չ էլ Վարդան Արևելցուն:

Առաջին անգամ, ինչքան մեզ հայտնի դարձավ, հեղինակի անվան նշմամբ այն հանդիպում է Մատենադարանի № 5254 ձեռագրում՝ «Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի ասացեալ՝ Յաղագս խորանաց Անետարանին»⁷: Ո՛վ է այս Վարդանը՝ Հաղբատացի՞ն, Այգեկցի՞ն, Բարձրբերդցի՞ն, Արևելցի՞ն: Մեզ ավելի հավանական է թվում՝ առաջինը: Ինչո՞ւ: Նախ շատ ուշագրավ է այն հանգամանքը, որ

⁶ Փ. Անթապյան, «Տօնապատճառ» ժողովածուն, «Հանրիկ Մատենադարանի», 1971, № 10, էջ 103-126:

⁷ Ձև. № 5254, յ. 46բ:

⁴ Սույն տեղում, յ. 12ա:

⁵ Տե՛ս նաև. № 772, յ. 138ա, նու. № 5591, յ. 12ա:

վերոհիշյալ երեք հնագույն ձեռագրերն էլ (№ № 6106, 4139, 5254) միևնույն միջավայրի՝ Մահկանաբերդի և մերձակա գրչավայրերի արգասիք են: Հիշյալ Վարդանաներից Այգեկցին և Բարձրբերդցին ոչ միայն այս կողմերում չեն ապրել ու ստեղծագործել, այլև նման բնույթի աշխատանք նրանցից չի պահպանվել և ոչ էլ այդպիսին վերագրվել է նրանց: Բացի այդ, վերջինս 1255 թվականին շատ երիտասարդ էր և հագիվ թե այդ ժամանակ կարողանար նման լուրջ տեսական գործ ստեղծել: Եթե նույնիսկ հնարավոր համարենք, որ նրանք, այդուամենայնիվ, կարող էին այդպիսի աշխատության հեղինակ լինել, ինչ որ չի բացառված, սակայն չենք կարող անտեսել, թե ինչու հիշյալ մեկնության հնագույն ընդօրինակությունները պիտի լինեին Մահկանաբերդում ու մոտակայքում և ոչ՝ Կիլիկիայում, ուր ապրել և ստեղծագործել են նրանք: Եթե Ներսես Շնորհալին լինեք նրա հեղինակը, դարձյալ բնական ու սպասելի էր, որ այն նախապես երևար Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերում:

Մահկանաբերդի շրջակա գիտամշակութային և գրչագրական կենտրոններում ապրել և նույնիսկ լայն մատենագրական գործունեություն են ծավալել Վարդան Հաղբատացին և Վարդան Արևելցին: Երկուսի թեկնածությունն էլ հավանականությունից դուրս չի մնում, սակայն, առավել հավանականը, մեր կարծիքով, Վարդան Հաղբատացու թեկնածությունն է: Բացի այն, որ նա այս կողմերում սնած ու գործած մատենագիր է, նա եղել է նաև Կիլիկիայում, սերտորեն համագործակցել է Ներսես Շնորհալու հետ, վերջինիս խնդրանքով մատենագրական աշխատանքներ էլ է կատարել: Թերևս և հիշյալ մեկնությունը նրան խնդրանքի արգասիք է: Ըստ երևույթին, ավելի ուշ, մեզ անունն անհայտ մի խմբագրի կամ գրչի կողմից այն ընդօրինակվել է Ներսես Շնորհալու «Մատթեոսի

Աւետարանի մեկնութեան» հետ համատեղ և այս ճանապարհով աստիճանաբար տարածվել ու վերագրվել է Ներսես Շնորհալուն: Հիշենք, որ հնագույն գրչագրերում այս երկու մեկնությունները միասնաբար չեն ընդօրինակված և դիտված են ուրույն, անջատ երկեր: Կարելի է ենթադրել, որ այդ հնարավոր խմբագիրը Հովհաննես Ծործորեցին է, որը շարունակել և ավարտել է Ներսես Շնորհալու հիշյալ մեկնությունը:

1280 թվականին ընդօրինակված վերոհիշյալ № 5254 ձեռագրում խնդրո առարկա մեկնության հեղինակ Վարդան վարդապետը համարվում է «երանելի»: Այդ ժամանակ Վարդան Արևելցու մահվանից անցել էր ընդամենը 9 տարի. 9 տարին քիչ չէ՝, որպեսզի Վարդան Արևելցին «երանելիների» շարքում դասվեր: Դա, իհարկե, չի բացառված, սակայն, մանավանդ բառիս միջնադարյան-եկեղեցական ընկալմամբ «երանելին» ավելի է պատշաճում ավելի վաղ վախճանածի համար, իսկ այդպիսին՝ Վարդան Հաղբատացին է:

Այս առնչությամբ հարկ է նկատի ունենալ նաև այն, որ լեզվաճական հատկանիշներով էլ սույն մեկնությունը ավելի պատշաճում է Վարդան Հաղբատացու, քան Վարդան Արևելցու գրչին. վերջինիս համաբնույթ երկերը առավել պարզ ու մատչելի շարադրանք ունեն:

Այս ամենի հիման վրա մեր կարծիքն այն մասին, թե Ավետարանի 10 խորանների վերաբերյալ հիշյալ մեկնության հեղինակը Վարդան Հաղբատացին է, թվում է, ավելի համոզիչ է դառնում:

Մեկնության խորագիրն է՝ «Երանելուն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի ասացեալ՝ Յաղագս խորանաց Աւետարանին», սկզբնատողը՝ «Մատենանք Աստուածագիծք և հոգեբույս վարդապետութիւնք իմաստից...»⁶:

⁶ Ձեռ. № 5254, թ. 46բ:

